«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության հիմնախնդիր ,կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ ***Աշխարհագրություն***

Հետազոտող ուսուցիչ՝ ***Աննա Օհանյան***

Ուսումնական հաստատություն՝ Դարակերտի Դ.Լաղոյանի անվանի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……3

Բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը……5

ՀՀ-ում էկոլոգիական կրթության կարևորությունը. 7

Բնապահպանական կրության և դաստիարակության սկզբունքները 10

Բնապահպանական կրթության իրականացման ձևերը ավագ դպրոցում …… .12

Եզրակացություն……18

Գրականության ցանկ ……19

Ներածություն

20-րդ դարի վերջին տասնամյակին և 21-րդ դարասկզբին կրթական բարեփոխումները համընկան մեր մոլորակի բնապահպանական խնդիրների խորացմանը և մարդկության կողմից դրանց իմաստավորման հետ: Բնապահպանական ներկա իրավիճակը ոչ միայն էկոլոգիական վերահաս աղետի ազդանշան է, այլև ցույց է տալիս բնության նկատմամբ մարդու և հասարակության հարաբերությունների սահմանափակությունը: Հազարամյակների ընթացքում տեղի են ունեցել բնության վերափոխում ու բնական պաշարների շահագործում, որոնք ժամանակակից պայմաններում հանգեցրել են երկրաքիմիական գործընթացների փոփոխության: Այսօր մարդու առջև ծառացել են նոր իրողություններ, առաջին հերթին իր գոյության և կենսակերպի վերաիմաստավորման խնդիրը: Բացահայտվել է մարդկային ընտրության ազդեցությունը մարդու ճակատագրի վրա, որը կարող է կանխորոշել նաև քաղաքակրթության ճակատագիրը: Քաղաքակրթության տեխնոլոգիական և սոցիալ-տնտեսական արդի զարգացման պայմաններում բնապահպանական հիմնախնդիրների լուծումը ձեռք է բերում կենսականորեն կարևոր նշանակություն: Պարզ է, որ մարդկության կողմից շրջակա միջավայրի փոփոխումը դժվարացնում է յուրաքանչյուր կենդանի էակի, այդ թվում մարդու գոյությունը: Ամբողջ աշխարհում ավելանում է էկոլոգիապես անբարենպաստ երկրների թիվը: Երկրաէկոլազիական գործընթացները էական ազդեցություն են թողնում կենսոլոլորտի էկոլոգիական իրավիճակի ձևավորման վրա: Այս պատճառներով էլ պայմանավորված է հետազոտատան աշխատանքիս թեմայի ընտրությունը և նպատակ՝

ա/ արժևորել բնապահպանական գիտելիքների դերն ու նշանակությունը

բ/ կատարելագործել և ուժեղացնել բնապահպանական գիտելիքները

գ/ բարձրացնել բնապահպանական ուսումնառության որակը

դ/ շարժվել հետևալ սկզբունքով՝ «մտածել համամոլորակային, գործել տեղային մասշտաբով»

21-րդ դարի շեմին Երկիր մոլորակը հայտնվել է ծայրահեղ ճգնաժամային վիճակում նյութերի, էներգիայի գերօգտագործման և տեղեկավության ոչ խելամիտ օգտագործման հետևանքով: Արդյունքում խախտվել են կենսոլորտի ինքնակազմակերպաման ,ինքնակարգավորման, ինքնավերականգնման բոլոր հիմնական հատկանիշները, որոնց միջոցով ապահովվում են նրա կայունությունը և հաստատունությունը՝ երաշխավորելով կյանքի անընդհատության պայմանները և երկրի վրա քաղաքակրթության երկարատև գոյության հնարավորությունը:

Այդ պատճառով կրթության ոլորտը և նրա զարգացման կառավարումը հույժ կարևոր են բնապահպանական խնդիրները լուծելու համար։ Ի վերջո ամբողջ կրթական համակարգը մարդու գոյության պահպանման երաշխիքն է ,քանի որ նրա միջոցով է իրականացվում մարդկային որակների, գիտելիքների, արժեքների, ընդհանրապես մշակույթի սերնդից սերունդ փոխանցման, վերարտադրման օբյեկտիվ գործընթացը։ Հենց այդ դիրքերից էլ կրթությունը պետք է լինի կառավարվող առաջընթաց համակարգ, որը պետք է կանխատեսիի և բավարարի ապագա քաղաքակիրթ հասարակության պահանջմուքները։ Այդ պատճառով հետազոտական աշխատանքիս նպատակները ուսումնասիրելու եմ հետևյալ խնդիրների միջոցով .

1. Արդյոք արդիական է բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրությունը

2. ՀՀ-ում բնապահպանական խնդիրների արդիականությունը

3. Բնապահպանական կրության և դաստիարակության սկզբունքները

4. Էկոլոգիական կրթության բովանդակությունը, նպատակը և խնդիրները ավագ դպրոցում

Բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը

Ա.Դ.Ուրսուլը նշում է. «Ամբողջ կրթության համակարգը ձեռք է բերում երկու գլոբալ գործառույթ՝ ոչ մարդասիրական /որը էությունը հանգեցվում է կրթական գործընթացի կողմնորոշմանը դեպի մարդկության գոյապահպանման և անընդհատ զարգացմանը /էկոլոգիական, որը ուշադրությունը կենտրոնացնում է, կենսոլորտի ընդհանրապես բնության պահպանմանը, բարենպաստ էկոլոգիական պայմանների ստեղծման և նյութաէներգետիկական պաշարների բավարարմանը ։

Էկոլոգիական կրթությունը հիմնախնդիրը հրատապ խնդիր է աշխարհի շատ երկրների համար։ Այդ են վկայում աճող սերընդի էկոլոգիական պատրաստության տեսության ու պրակտիկայի հարցերին նվիրված ազգային և միջազգային համաժողովների փասթաթղթերն ու նյութերը ։

Այս հարցի վերաբերյալ ընդունվելու են մի շարք միջկառավարական որոշումներ,որոնցում ընդգծվում են համընդհանուր էկոլոգիական ուսուցման սոցիալական և մանկավարժական նշանակությունը ։

Այսպիսով՝ Էկոլոգիական կրթությունը շրջակա միջավայրի վրա մարդածին գործոնների ներգործության բացասական հետևանքների հաղթահարման կարևորագույն պայմաններից մեկը և անձի էկոլոգիական մշակույթի ձևավորման որոշիչ գործոնն է՝ որպես «Մարդ-Հասարակություն-շրջակա միջավայր» համակարգում հարաբերությունների ներդաշնակության կարգավորիչ։

Այդ ոլորտի կարևորությունը մասնակիորեն կապված է սոցիալական խնդիրների և քաղաքացիական հասարակության զարգացման մեջ կրթության դերի բացահայտման հետ։ Վերջին ժամանակներս հասարակության զարգացման համատեքստում կրթության ոլորտը քաղաքական ,ազգային անվտանգության կարևորագույն գործոնն է դարձել։ Տեղի է ունեցել հայեցակարգային շրջադարձ։ Զարգացած երկրների կայուն զարգացումը, որ նախկինում վերաբերում էր միայն էկոլոգիային և էկոլոգիական հիմնախնդիրներին, այսօր գլոբալ նշանակաություն են ստացել։

Կայուն զարգացման բովանդակության էվոլուցիան ընդլայնվում է մինչև շրջակա միջավայրի՝ տնտեսության և մշակույթի հետ ամուր փոխգործակցության ընկալման հայեցակարգային հիմքերը։ Այդ մտածողության հիմքերը դրվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՅՈՒՆԵՊԻ /Բելգրադի՝ 1975թ.,

Հելսինկի՝ 1997թ., Թբիլիսիի՝ 1977թ., Դելիի՝ 1981թ., Փարիզի՝ 1986թ., Մոսկվայի՝ 1987թ., Ռիո դե Ժնեյրոյի՝ 1992թ.,/ միջազգային համաժողովներում: Դա անմիջականորեն կապված է գիտական մտքի զարգացման և յուրաքանչյուր երկրի քաղաքացիների ակտիվ դիրքորոշման դրսևորման հետ:

Կայուն զարգացման հասկացության էվոլուցիան հանգեցրեց այն գիտակցմանը, որ կրթությունը վերջապես պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի ուսման, դաստիարակության և վարքի, այլ ոչ թե միայն դասավանդման վրա :

Շրջակա միջավայրի հետ մարդու փոխհարաբերության խնդիրը կարող է լուծվել միայն բոլոր մարդկանց էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման,նրանց էկոլոգիական մշակույթի բարձրացման պայմաններում: Ըստ կայուն զարգացման հայեցակարգի՝ մարդկությունը պետք է իր գործունեությունը պետք է համաձանեցնի բնության օրենքներին՝ փոխի բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքը ընդունելով նրա բացառիկությունը և անկրկնելությունը: Ժամանակակից հասարակության կայուն զարգացմանն անցնելու կարևոր պայմանը էկոլոգիական կրթության համակարգի ձևավորումն ու զարգացումն է,որը իր հերթին խնդրառում է մանկավարժության մեջ նրա կառավարման մեխանիզմների մշակում:

ՀՀ-ում էկոլոգիական կրթության կարևորությունը

Հայաստանի Հանպապետության էկոլոգիական կրթության մասին օրենքի ընդունմամբ աճող սերընդի էկոլոգիական կրթության, բնակչության էկոլոգիական լուսավորության համակարգի ձևավորման համար իրավական բազա ստեղծվեց: Այն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ նոր պետական կրթակարգում: Բնականաբար էկոլոգիական կրթության համակարգի ձևավորումը ՀՀ–ում պետք է դասվի առաջնակարգ պետական խնդիրնեիրի շարքում: Այդ կարևորագույն փաստաթուղթը ենթադրում է էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգի ստեղծում, որի առաջին աստիճանը համարվում է նախադպրոցական կրթությունը: Հենց նախադպրոցական տարիքում են դրվում մարդու աշխարհայաց քի հիմքերը ձևավորվում են նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ: Էկոլոգիական կրթության անընդմեջ համակարգի ստեղծման հիմքերը դրվել 1970թ. Թիֆլիսում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՅՈՒՆԵՊԻ և Մոսկվայում կայացած «Թբիլիսի+10» (1987,1999թթ.) միջազգային համաժողովների նյութերում: Աճող սերնդի էկոլոգիական կրթության և դաստիրակության էկոլոգիակն վիճակը Հայաստանում կիստ մտահոգության տեղիք է տալիս:

Ակնառու է էկոլոգիական կրթույան նշանակությունը անտեսելու, էկոլոգիական կրթության արդյունավետ կառավարման պետական հասարակական մեխանիզմների, կրթական և բնապահպանական կառույցների գործողությունների անհամաձայնեցվածությունը:

Էկոլոգիական կրթության առումով դպրոցի դերը հաճախ սահմանափակվում է միայն սովորողների ձևական տեղեկատվության հաղորդմամբ:

Կապված վերաբերյալի հետ՝ առավել հրատապ է դառնում հանրակրթական դպրոցի, բուհի դերը սովորողների էկոլոգիական կրթության համակարգի կառավարման հնարավորությունների որոշակիացման գործում:

Էկոլոգիական կրթությունը այսօր մեր երկրում նույնպես պետք է համարվի կրթության մեջ գերակա ուղղություն առաջին հերթին այն պատճառով, որ էկոլոգիական տեսանկյունից Հայաստանի Հանրապետությանը դժվար թե կարելի լինի համարել էկոլոգիապես բարվոք միջավայր. մշակովի հողատարածքները ենթարկվում են աղակալման , աննախադեպ կրճատվում են առանցնային էլ աղքատ, անտառային մակերեսները, ավելանում է Կարմիր գրքում ընդգրկվող

բուսական և կենդանական տեսակների թիվը, ոչնչացվում են զբոսայգիներն ու պուրակները, կեղտոտվում են գետերի ջրերը ։

Այսպիսի աղետալի վիճակը թելադրում է Հայաստանի էկոլոգիական կրթության կարևորությունը։ Աճող սերընդի էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը, էկոլոգիական գիտացությունը, էկոլոգիական մշակույթը և էկոլոգիական բարոյականությունը կոչված են կանխելու բնության վրա մարդու հետագա բացասական ներգործությունը, պահպանելու բնության և հասարակության դինամիկ հավասարակշռությունը, նպաստելու բնական համալիրների ոչ միայն պահպանմանը, այլև բարելավմանն ու վերարտադրմանը, կառավարելու էվոլուցիոն գործընթացը՝ կիրառելով ժամանակակից էկոլոգիական ճարտարագիտության մեթոդներն ու միջոցները ։

ՀՀ տարածը թեև փոքր է, բայց ունի իր յուրատեսակ բնաէկոլոգիական, ֆիզիկաաշխարհագրական,տնտեսական ,սոցիալմշակությաին ,պատմական ,ազգագրական, ժողովրդագրական զարգացման յուրահատկությունները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիակն կրթության համակարգի կառավարման գործընթացում։ Դրանում է հենց կրթության ժաղովրդավարացման, սոցիալ մշակությային պահանջների իրականացման խնդիրների լուծումը։ ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական, բնակլիմայական զգալի տարբերությունների պայմաններում դժվար թե կարելի լինի բոլոր մարզերի համար էկոլոգիական կրթության միանման բովանդակության մշակումը։ Այս տեսակետից ՀՀ էկոլոգիական իրավիճակը առաջին պլան է մղում էկոլոգիական միջավայրի բարելավման մրջոցով ազգաբնակչության առողջացման առաջնահերթ խնդիրների լուծումը՝ ժառանգական հիվանդությունների հետագա կանխման նպատակով ։

Այս խնդիրների իրագործումը պահանջում է ազգաբնակչության անընդհատ էկոլոգիական կրթության և լուսավորության դինամիկ համակարգի ստեղծում ։ Այդ համակարգում կենտրոնական օղակը դպրոցն է, որտեղ սովորողները ձեռք են բերում միջավայրի ճանաչման, ուսումնասիրման և պահպանման գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, գործնական փորձ, որոնց հիման վրա մշակվում է բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք։ Դա նշանակում է, որ ներկայումս կրթական բոլոր հաստատությունների առջև դրված են գլոբալ խնդիրներ .

- Ձևավորել սովորողի էկոլոգիական պատկերացումները
- Տալ գիտելիքներ բնության և հասարակության փոխկապակցվածության մասին
- Ձևավարել ժամանակակից մարդուն հատուկ աշխարհընկալում

- Նպաստել բնության մեջ մարդու տեղի իմաստավորմանը, իր գործի հանդեպ պատասխանատվության զգացման դաստիարակմանը
- Սովորեցնել գնահատել բնության աշխարհը՝ որպես հոգևոր արժեք
- Ձևավորել բնության նկատմամբ անձի ճիշտ վերաբերմունք
- Ձևավորել էկոլոգիական բարձր մշակույթ:

Սրանով է պայմանավորված ժամանակակից մարդու էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական մշակույթի ձևավորման հիմախնդրի առաջնահերթությունը:

ՀՀ ում էկոլոգիական խնդիրներն հետևյալն են

Խնդիրներ	%
Անտառների հատում, անտառային տարածքների բացակայություն	19.6
Շրջակա միջավայրի աղտոտվածություն	14.1
Օդի աղտոտվածություն	5.8
Խմելու ջրի խնդիր՝ աղտոտվածություն, սակավություն	5.1
Պոչամբարների վնասակար ազդեցություն	3.8
Ոռոգման ջրի խնդիր, սակավություն, աղտոտվածություն	2.0
Կենդանական և բուսական աշխարհի պահպանության խնդիր	1.8
ՀԷԿ-երի շահագործում	0.8
Լճերի, գետերի աղտոտվածություն	0.6
Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման անհրաժեշտություն	0.5
Անապատացում	0.4
Գլոբալ տաքացում	0.3

Բնապահպանական կրության և դաստիարակության սկզբունքները

Անձի բնապահպանական մշակույթը նախատեսում է որոշակի գիտելիքների և համոզմունքերի ակայություն ։Բնապահպանական մշակույթը դառնում է հասարակության ակտիվության և գիտակցության կարևորագույն ցուցանիշ ։Բնապահպանական մշակույթով օժտված ենթարկում է իր գործունեության բոլոր ձևերը արդյունավետ բնօգտագործման պահանջներին ,հոգ է տանում շրջապատող միջավայրի բարելավման մասին , թույլ չի տռալիս նրա քայքայումն ու աղտոտումը ։ Դրա համար նրան անհրաժեշտ է տրապետել գիտելիքների ,ինչպես նաև մշակել գործնական հմտություններ բնական միջավայրի բարենպաստ պայմանների պահպանման համար ։Բնապահպանական դաստիարակության նպատակներին համապատասխան ձևավորվում են սկզբունքներ ,որոնք որոշում են շրջապատող միջավայրի նկատմամբ սովորողների պատասխանատու վերաբերմունքի զարգացման գործընթացը ։

Առանձնացվում են բնապահպանական կրթության և դաստիարակության հետևյակ սկզբունքները `

1. **Գիտակցության և գործողությունների միասնացման սկզբունք** ։Այն արտացոլում է շրջապատող միջավարի նկատմամբ փոխադարձ կապ փոխադարձ կապ անփի մտածողության, սկզբունքների և գործունեության պատասխանատու վերաբերմունքի զարգացման գործընթացում, օրինակ ` կենսոլորտի վրա մարդու ազդեցության մեծացման փաստերի վերլուծությունը կարողէ հաջողությամբ լրացվել մարդու կողմից բնության գեղեցկության ընկալմամբ ։

2. **Կանխատեսման սկզբունք** ։ Այն ենթադրում է յուրաքանչյուրի ամենօրյա հագատարություն միջավայրի պահպանության նկատմամբ ոչ միայն մեր,այլև ապագա սերունդների համար։ Ըստ այս սկզբունքի ` դպրոցական կրթության մեջ պետք է ուսումնասիրել բնության պահպանության և վերականգնման մասին պետական փաստաթղթերը։ Բնապահպանությունն ու բնության վերականգնումը դիտվում են որպես միասնական գործընթացի երկու կողմեր ։

3. **Էկոլոգիական հիմնախնդիրների համաերկրային ,ազգային և տեղային /լոկալ/ մակարդակների փոխադարձ կապի սկզբունք ։** Կարևոր է յուրաքանչյուր սովորողի գիտակցությանը հասցնել այն փաստը, որ բազմաթիվ էկոլոգիական խնդիրների ծագումը կախված է յուրաքանչյուր մարդու արարքներից և վարքից այն վայրերում ,որտեղ նա ապրում և աշխատում է։Բնության վրա ինչպես դրական ,այնպես էլ բացասական ազդեցությունների փաստերի հստակ

վերլուծությունը պետք է համադրվի այդ ազդեցությունների համաերկրային մասշտաբի գնահատման պատասխանով, օրինակ՝ միջավայրի պահպանությանը աղտոտումից, կենսաբանական բազմազանության պահպանումը ։

4. **Միջառարկայական մոտեցման սկզբունք** Այդ էկոլոգիական կրթության ղեկավարող սկզբունքներից մեկն է ։Բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը չի կրող կազմակերպվել միայն առանձին ուսումնական առարկաների գիտելիքներով։

5. **Շրջակա միջավայրի հետ սովորողների նպատակաուղղված շփման սկզբունք։** Այսպիսի շփումն իրականանում է իմացական խաղային ,աշխատանքային և այլ տեսակի գործունեության ընթացքում ։Հայրենի բնության հոգատար տիրոջ դաստիարակման համար հասունացել է ուսումնական առարկաների և իրական կյանքի միջև կապը ուժեղացնելու անհրաժեշտությունը ։

Բնապահպանական դաստիարակման արդյունքն ու նպատակը յուրաքանչյուր մարդու և հասարակության բնապահպանական մշակույթի ձևավորումն է։

Բնապահպանական կրթության իրականացման ձևերը ավագ դպրոցում

Ավագ դպրոցականների կողմից բնապահպանական կրթության բովանդակության իրականացման համար կարևոր նշանակություն ունեն ուսուցման կազմակերպման ձևերն ու միջոցները: Մասնավոր մեթոդիկաներում ուսուցման ձևերի կատարելագործումը թույլ են տալիս հասնել կրթության ցանակալի նպատակների նվաճման:

Հետազոտական աշխատանքիս մեջ կներկայացնեմ ուսուցման կազմակերպման ձևերի այն բնութագրերրը, որոնք սովորողներն օգտագործում են բնապահպանական կրթության բովանդակության ուսումնահիրության ընթացքում ։

Ուսուցումը /որ ներառում է ուսումնառությունը և դասավանդումը / իր էությամբ իմացական գործընթաց է: Այն մշտապես սուբյեկտ-սուբյեկտային փոխգործակցություն է, որը ուսուցչի և աշակերտի միմյանց նպատակաուղղված, արդյունավետ ազդեության շնորհիվ դառնում է ամբողջական փոխներգործություն:

Այսինքն՝ ուսուցումը հաղորդակցում է, որի ընթացքում իրականացվում է հասարակական-պատմական փորձի այս կամ այն գործունեության յուրացում և տիրապետում:

Կրթության դաս-դասարանային պայմաններում ուսուցման գործընթացն իրականացվում է որոշակիորեն մշակված ձևերով: Դիդակտիկային վերաբերող թույլ է տալիս մտածել, որ «ուսուցման կազմակերպան ձևեր» հասկացության միանշանակ սահմանում չկա ։

Այն լիարժեք սահմանել է Բ.Լիխաչևը .

«Ուսուցման կազմակերպան ձևերն իրենցից ներկայացնում են իմացական և դաստիարակչական հաղորդակցման արտաքնապես շեշտված և ներքնապես փոխկապակցված նպատակաուղղված, հստակ կազմակերպված, բովանդակությամբ հագեցած մեթոդական համակարգ, ուսուցչի և սովորողների փոխգործակցություն, հարաբերություններ»

Ուսուցման ձրերը ավագ դպրոցում համապատասխանաբար դասակարգվում են ըստ անհատական, խմբային, դասարանական, արտադասարանական, դպրոցական, լրացուցիչ, արտադպրոցական, հիմանական և ոչ հիմնական ձևերի: Սակայն այս դասակարգումը խիստ գիտական չի համարվում և ոչ մանակավարժ-գիտնականներն են այն ընդունում: Պարզապես այն

օգնում է իրականացնել ավագ դպրոցների կողմից բնապահպանական կրթության ուսումնասիրման ձևերի ընտրությունը ։

Հենվելով վեր շարադրվածի վրա՝ ավագ դպրոցների բնապահպանական կրթության բովանդակության իրականացման հիմանական ձրերը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝ /տես հավելված 1/

Գծապատկերն արտացոլում է ավագ դպրոցականների ուսուցման կազմակերպման կարևորագույն ձևերը ,որտեղ առաջնայինը մնում է դասը։

Ըստ բնապահպանության դասավանդման մեթոդիստների՝ հենց դասն է առավել ամբողջական կազմով ներկայացնում ուսուցման գործընթացի բոլոր տարրերը ՝ նպատակը, բովանդակությունը, մեթոդները, միջոցները սովորողների ուսումնական գործունեությունը կառավարող ուսուցչի գործունեությունը։ **Դասն արտացոլում է ուսուցման ամբողջական գործընթացը օրգանական միասնական կապի մեջ գտնվելով մյուս ձևերի էքսկուրսիաի, դերային խաղերի, դաշտային պրակտիկայի, տնային աշխատանքի հետ ։**

Ավագ դպրոցականների կրթության բովանդակության ուսումնասիրման հիմնական ձևերը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով ՝/տես հավելված 2/

Գծապատկերն արտացոլում է ավագ դպրոցականների ուսուցման կազմակերպման կարևորագույն ձևերը , որտեղ առաջնայինը մնում է դասը։

Հենց դասն է առավել ամբողջական կազմով ներկայացնում ուսուցման գործընթացի բոլոր տարրերը՝ ***նպատակը, բովանդակությունը, մեթոդները, միջոցները, սովորողների ուսումնական գործունեությունը կառավարող ուսուցչի գործունեությունը։*** Դասն արտացոլում է ուսուցման ամբողջական գործընթացը օրգանական միասնական կապի մեջ գտնվելով մյուս ձևերի՝ ***էքսկուրսիայի, դերայաին խաղերի, դաշտային պրակտիկայի, տնային աշխատանքի*** հետ ։

Սովորողների էկոլոգիական կրթության բովանդակության արդյունավետ ուսումնասիրման հիմնական ձևերն են՝

Անհատական, խմբային և համընդհանուր աշխատանք։

Այս ձևերը դիտարկվում են որպես ինքնուրույն, սակայն նրանք թափանցում են ուսուցման մյուս ձևերի մեջ՝ բարձրացնելով դրանց կրթական և հատկապես զարգացնող և դաստիարակող դերը։

ՀՀ սովորողների կրթության՝ բովանդակության ուսումնասիրման ձևերի բացահայտմանն ու հիմնավորմանն է ուղղված իմ հետազոտական աշխատանքը։

Խմբային աշխատանքը կատարել եմ որոշակի առաջադրանքների կատարման ժամանակ: Խմբային աշխատանքի ձևերն են բնաճանաչողական էքսկուրսիաները, երկրագիտական արշավները, աբորատոր և գործնական պարապմունքները: Խմբային աշխատանքը ինձ թույլ տվեց ավելի ճկուն կերպով իրականացնել սովորողների ուսուցման նկատմամբ տարբերակված մոտեցումը: Աշխատանքի խմբային բնույթը հնարավորություն տվեց էկոլոգիական օրինաչափությունների սահմանման, էկոհամակարգերի կամ նրանց առանձին առանձին բաղադրամասերի բնութագրման համար հարուստ փաստացի նյութ ստանալ :

Այսպես, օրինակ ցանկացած տեղային էկոհամակարգի նկարագրմանը նպատակուղղված խմբային աշխատանքը հնարավորություն տվեց պատնմական տեղեկություններ հավաքել նրա փոփոխությունների, բնակչության՝ նրա նկատմամբ ունեցած էկոհամակարգերի բարելավման ուղիները՝ հաշվի առնելով ինչպես տեղային պայմանները, այնպես էլ կայուն զարգացման ռազմավարությունը:

Անհատական աշխատանքը կառուցել ենք՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի հոգեկան և ֆիզիկական առանձնահատկությունները՝ ուսումնական նյութի ինքնուրույն ուսումնասիրման ու անհատական առաջադրանքների կատարման համար: Առաջաջադրանքներն այնպես եմ կազմել կամ ընտրել, որ յորաքանչյուր աշակերտ կարողանա այն կատարել :

Անհատական աշխատանքը մեր փորձարարական փուլում ավելի արդյունավետ ընթացավ մասնավորապես արտաուսումնական և տնային աշխատանքների կատարման ընթացքում: Ավագ դպրոցականները գրեցին ռեֆերատներ, զեկույցներ, դերային խաղերր և սյուժեներ և այլն :

Ուսումնական պարապմունք. սովորողների էկոլոգիական կրթության համակարգում այն մեր կողմից ընդունվել է որպես ուսուցման հիմնական ձև՝ իր բոլոր բաղադրամասերով :

Ավագ դպրոցականների բնապահպանական կրթության կազմակերպան արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է համապատասխան ռեսուրսային ապահովում: Ռեսուրսային համալիրում առաջնայինը նյութատեխնիկական բազան է, որը աներկբայորեն նպաստում է իրականության խոր իմաստավորմանը, հույզերի զարգացմանը: Այսօր ակնառու է այն փաստը, որը ուսուցման առաջավոր մեթոդների և հնարների օգտագործումը, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ձևերի կատարելագործումը հնարավոր են միայն ուսուցման միջոցների համալիր կրառման դեպքում :

ՀՀ դպրոցներն (այդ թվում նաև Դարակերտի միջնակարգ դպրոցը) այժմ ապահովված չեն էկոլոգիական կրթության կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով՝

- Ուսումնական կաբինետ՝ բնապահպանական կրթության բովանդակությանը և նպատակներին համապատասխանող կահավորմամբ
- Դպրոցական ուսումնափորձնական հողամաս
- Ուսումնական լաբորատորիա՝ ներառյալ կենդանիներ պահելու համար հատկացված տարածք
- Բնապահպանական թեմատիկայով համակարգչային ուսումնական ծրագրեր

Կրթական գործընթացում կրառվող ուսուցման միջոցների կարևորության մասին հատկանշական է Տ.Նազարովի հետևյալ միտքը.

«Ուսուցման ժամանակակից գործընթացը արդյունավետ կլինի, եթե իրականացվի ուսուցման միջոցների բնական փոխգործակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացի մյուս բաղադրիչնեիժրի հետ»։

ՈՒսուցման միջոցները բազմազան են՝ ուսումնամեթոդական գրականության, բնական օբյեկտներ (բույսեր, կենդանիներ), դրանց արհեստական մշակումներ, մուլյաժներ, մոդելներ, նկարներ, սարքավորումներ, պրեպարատներ, ուսուցման տեխնիկական միջոցներ, ուսումնական ծրագրեր, համակարգիչներ և այլն։

Գծապատկեր 1. Բնապահպանական կրթության արտադպրոցական և արտաուսումնական ձևերը



Գծապատկեր 19. Էկոլոգիական կրթության համակարգի կառավարման արդյունավետությունն ապահովող գործոններ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխանքը ավարտելով եկանք այն եզրահանգման, որ բնապահպանական հիմնախնդիրները երեկ, այօր և վաղը եղել ու մնում են արդիական: Օր օրի այդ խնդիրներին ավելի ենք բախվում : Տեղային մասշտաբից վերածվել են գլոբալ մասշտաբի: Շարժվելով՝ «մտածել համամոլորակային, գործել տեղային մասշտաբով» սկզբունքով պետք է վեր հանել ՀՀ բնապահպանական բոլոր խնդիրները: Խնդիրների լուծման համար միշտ օգնության է հասնում ՀՀ յուրաքանչյուր անհատ: Եվ որպեսզի անհատը գա այդ գիտակցական մակարդակին օգնության է հասնում կրթությունը: Ավագ սերնդի մեջ սերմանելով բնապահպանական գիտակցություն, մենք կարող ենք ավելի շուտ արդյունքի հասնել :Չէ որ փոքրերը սովորում են նաև իրենց ավագ սերընդից :Այսպիսով՝ պարզ է, որ ձևավորելով էկոլոգիական գիտակցությունը կրթության միջոցով, հնարավոր է լուծել մարդկության առջև ծառացած և նրան հուզող և մտահոգող շատ խնդիրներ: Իր գիտելիքները հարստացնելով, բնության ու հասարակության փոխազդեցությունը, անցյալ և ներկա վիճակը վերլուծելու և գնահատելու կարողություն ձեռք բերելով՝ մարդը կձերբազատվի սխալ պատկերացումներից, անհիմն մտայնություններից, հնարավորություն կունենա նորովի, ոչ թե սովորույթի ուժով, այլ գիտակցաբար ընկալելու իր շուրջը տեղի ունեցող երևույթները, կարողանա առավել ճշգրիտ սահմանել այն որոշակի դերը, որ մարդկային գործունեության մեջ ունեն հասարակական հարաբերությունները, աշխարհայացքային, բարոյական, մշակութային հիմնադրույթները: Մուտք գործելով XXI դար՝ մարդն արդեն իսկ զգում է, որ իր էությունը վերլուծության կարիք ունի, մարդը սկսում է ավելի խորությամբ ըմբռնել, որ ինքը տիեզերքի մի փոքր մասնիկն է՝ տարրերից մեկը: Հետազոտական աշխատանքս ուզում եմ ավարտել Ն. Լոբաչևսկու հետևյալ խոսքերով. «Մարդը ծնվում է բնության արքան, տերն ու տիրակալը լինելու համար, բայց իմաստությունը, որով նա պետք է կարողանա կառավարել, իրեն ի ծնե չի տրվում, այլ ձեռք է բերվում դաստիարակության և ուսման շնորհիվ»: Այո՛, մարդը պիտի սովորի, սովորի կառավարել և իրեն և մոլորակի գործերը, կառավարի այնպես, որ չխաթարվեն հողագնդի վրա մարդկային կյանքի պայմանները, պահպանվի գոնե առկա վիճակը գալիք սերունդների համար:

Օգտագործվող գրականության ցանկ

1.Լաուրա Թոռնիկի Ասատրյան <<Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքներ >>

2.Սուքիասյան <<Բնապահպանության հիմունքների դասընթաց >>

3.Ա.Ջուհարյան, Ռ.Եդոյան և ուրշներ << Էկոլոգիական Կրթության Մանկավարժական Հիմունքները >

3. Մաքսիմ Մանասյան, Արմեն Հովսեփյան,Ակսել Պոտոսյան, <<աշխարհագրություն >>, 12-րդ դասարան

4. Կլիմայական արկղիկ <<Ինչպես է կլիմայի փոփոխությունն ազդում բնության և մարդու վրա >>

5. Կլիմայական արկղիկ <<Կլիմայի փոփոխության հիմախնդիրը >>

6. https://www.ecolur.org/hy/news/dialog-with-officials/7802/